Հավելված
ՀՀ վարչապետի 2015 թ.
մարտի 9 -ի N 180 - Ա
որոշման

Ժ Ա Մ Ա Ն Ա Կ Ա Ց Ո Ւ Յ Ց

ԿՈՒՏԱԿԱՅԻՆ ԲԱՂԱԴՐԻՉԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆԸ ԲԱՐՁՐԱՑՆԵԼՈՒ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ

NN ը/կ	Միջոցառման նկարագրությունը	Պատասխանատու կատարողը	Ժամկետը	Ակնկալվող արդյունքը	Ֆինանսավորումը
1	Մասնակիցների ռեեստրը վարողին փոխանցված և անձնավորված հաշվարկի հիման վրա հաշվարկված պարտավորությունների միջև առկա տարբերության կրճատում				
1.1	Սոցիալական վճարների չմարված պարտավորություններ ունեցող գործատուների մասին տեղեկատվության վերլուծության իրականացում՝ այդ թվում նաև՝ պարտավորությունների չկատարման կամ թերի կատարման պատճառների բացահայտմամբ	ՀՀ ֆինանսների նախարարություն	16. 03. 2015 թ.	Տեղեկանք, որը կներառի սոցիալական վճարների պարտավորություն ունեցող գործատուների մասին տեղեկատվություն՝ ըստ պետական և ոչ պետական հատվածի: Ոչ պետական հատվածի գործատուների մասին տեղեկատվությունը կներկայացվի ըստ հետևյալ բաժանումների՝ 1) ըստ հարկային տեսչությունների. 2) ըստ սոցիալական վճարի ժամկետանց պարտավորության ծավալի՝	չի պահանջվում

				- մինչև 500 000 դրամ՝ մանր, միջին - 500 000 դրամ և ավելի՝ խոշոր 3) ըստ այդ գործատուների՝ կուտակային բաղադրիչի մասնակիցներ հանդիսացող աշխատողների միջին թվաքանակի. - մինչև 5՝ մանր, - 6-50՝ միջին, - 50 և ավելի՝ խոշոր:	
1.2	Աշխատանքների իրականացում պետական համակարգի այն կառույցների (գործատուների) հետ, որոնք ունեն սոցիալական վճարի չմարված պարտավորություն (1.1-ին կետում նշված վերլուծության հիման վրա)	ՀՀ կառավարության աշխատակազմ ճյուղային նախարարություններ	19. 03. 2015 թ	ՀՀ վարչապետի հանձնարարականի մշակում՝ խնդիրների լուծման եղանակների և ժամկետների (վերջնաժամկետների) սահմանմամբ	չի պահանջվում
1.3	Աշխատանքների իրականացում մասնավոր հատվածի այն կառույցների (գործատուների) հետ, որոնք ունեն սոցիալական վճարի չմարված պարտավորություն (1.1-ին կետում նշված վերլուծության հիման վրա)	ՀՀ ֆինանսների նախարարություն՝ հարկային տեսչությունների միջոցով	24. 03 .2015 թ.	ՀՀ ֆինանսների նախարարի հրաման՝ անհրաժեշտ գործողությունների և միջոցառումների ներառմամբ	
1.4	Դասընթացների կազմակերպում ընկերությունների ֆինանսական մասնագետների և հաշվապահների համար՝ սոցիալական վճարների, դրանց պարտավորության մարման ընթացակարգերի և հարակից հարցերի վերաբերյալ	ՀՀ ֆինանսների նախարարություն <<Կենսաթոշակային համակարգի իրազեկման կենտրոն>> հիմնադրամ	պարբերաբար մինչև 01. 08. 2015 թ.	ՀՀ ֆինանսների նախարարի հրաման՝ ՀՀ ֆինանսների նախարարության ուսումնական կենտրոնում դասընթացներ կազմակերպելու և ՀՀ ֆինանսների նախարարության համապատասխան մասնագետներին որպես դասընթացավար ընդգրկելու վերաբերյալ: Դասընթացների անցկացման պլան-ժամանակացույցի կազմում և իրականացում	պահանջվում է ֆինանսավորում՝ դասընթացավարների վարձատրության համար

2.	«Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի պահանջներին համապատասխան՝ վճարման հանձնարարականի ձևավորման գործընթացի ավտոմատացում	ՀՀ ֆինանսների նախարարություն	01. 07. 2015 թ.	օրենքի 9-րդ հոդվածով սահմանված՝ կուտակային հատկացումների մասին անձնավորված տեղեկատվությունը մասնակիցների ռեեստրը վարողին վճարման հանձնարարականը տալու օրը տրամադրելու պահանջի ապահովման համար տեխնիկատեղեկատվական համապատասխան մոդուլի մշակում և գործարկում	չի պահանջվում
3.	Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի հունվարի 19-ի «Հարկային մարմնի կողմից կուտակային հատկացումները և դրանց մասին անձնավորված և դրանց վերաբերյալ տեղեկատվությունը մասնակիցների ռեեստր վարողին փոխանցելու հետ կապված սխալները շտկելու կարգը հաստատելու մասին» N 74-Ն որոշման մեջ փոփոխությունների կատարում	ՀՀ ֆինանսների նախարարություն ՀՀ կենտրոնական բանկ (համաձայնությամբ) Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա (համաձայնությամբ)	01. 06. 2015 թ.	1) ՀՀ կառավարության որոշման փոփոխությունների մշակում և ընդունում, որոնցով կսահմանվի կուտակային հատկացումների մասին անձնավորված տեղեկատվությունը մասնակիցների ռեեստրը վարողին փոխանցելու հետ կապված սխալները շտկելու արդյունավետ գործընթացը 2) կուտակային հատկացումների մասին անձնավորված տեղեկատվությունը մասնակիցների ռեեստրը վարողին փոխանցելու հետ կապված սխալները շտկելու գործընթացի ավտոմատացման համար անհրաժեշտ տեխնիկատեղեկատվական մոդուլի ստեղծում և գործարկում	չի պահանջվում
4.	Եկամտային հարկի և սոցիալական վճարի համար մեկ միասնական զանձապետական հաշիվ կիրառելու վերաբերյալ առաջարկությունների (ներառյալ գործողությունների ժամանակացույցի) ներկայացում	ՀՀ ֆինանսների նախարարություն	01. 07. 2015 թ.	հարկային օրենսդրությունում համապատասխան փոփոխությունների մշակում կամ նոր հարկային օրենսգրքում համապատասխան կարգավորումների նախատեսում	չի պահանջվում
5.	«Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 6-րդ	ՀՀ ֆինանսների նախարարություն	01. 07. 2015 թ.	ՀՀ կառավարության 2014 թ. հուլիսի 31-ի N 813-Ն որոշման կիրարկման	չի պահանջվում

	հոդվածի 6-րդ մասում նշված դեպքում (եթե անձը եկամուտ է ստանում մի քանի աղբյուրից) հաշվարկված և փոխանցված (գանձված) սոցիալական վճարների՝ օրենքով սահմանված չափը գերազանցող գումարները մասնակիցներին վերադարձնելու գործընթացի կանոնակարգում			ապահովում	
6.	Կուտակային հատկացումների, մասնավորապես՝ սոցիալական վճարների հետ կապված դիմում-բողոքների քննարկման գործընթացի բարելավման ուղղությամբ առաջարկությունների ներկայացում	ՀՀ ֆինանսների նախարարություն ՀՀ կենտրոնական բանկ (համաձայնությամբ) Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա (համաձայնությամբ)	01. 06. 2015 թ.	«Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 80-րդ հոդվածի 1-ին մասի կիրարկումն ապահովող՝ ՀՀ ֆինանսների նախարարի հանձնարարականի (հրամանի) ընդունում, որով կիստակեցվեն քաղաքացիների դիմում-բողոքների հետ կապված իրավահարաբերությունները և գործընթացները	պահանջվում է ֆինանսավորում՝ ռեսուրսների ներգրավման համար (աշխատողների թվի ավելացում, տեխնիկական միջոցների ձեռքբերում)
7.	Մեկ անձի գծով երկու հանրային ծառայությունների համարանիշի բացառման խնդրի ուսումնասիրում, լուծման ուղղությամբ առաջարկների ներկայացում	ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանություն	01. 04. 2015 թ.	օրենսդրության հստակեցման կամ այլ գործողությունների կատարման վերաբերյալ նամակ-առաջարկ ՀՀ կառավարությանը	
8.	Գրանցման հայտում անձնական տեղեկատվության որակի բարձրացմանն ուղղված առաջարկների ներկայացում և դրան համապատասխան միջոցառումների իրականացում	ՀՀ կառավարության աշխատակազմ ՀՀ կենտրոնական բանկ (համաձայնությամբ) Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա (համաձայնությամբ)	01. 05. 2015 թ.	փոփոխություն գրանցման հայտի լրացման հրահանգում և համապատասխան փոփոխություններ Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա ներկայացվող տեղեկատվության մեջ	
9.	Ակտիվների կառավարիչների	ՀՀ ֆինանսների	15. 03. 2015 թ.	տեղեկանք-առաջարկություն ակտիվ-	

	խնդիրների և համագործակ-ցության ձևերի քննարկում և համապատասխան քայլերի նախատեսում	նախարարություն ՀՀ կենտրոնական բանկ		ների կառավարիչների խնդիրների քննարկման և վերջիններիս հետ համագործակցության անհրաժեշտ մակարդակի պահպանման քայլերի վերաբերյալ	

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ